ՆՈՐ-ԴԱՐ

№ 38 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 16 Մարտի 1888 Չորեքշաբթի 16 Մարտի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 38

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., Տասով 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի սուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., բեկտաների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Հայոց Թատրոնի գոյութեան խնդիրը։
Քրոնիկոն.—Լուրեր։ Նշմարներ (վերջ.)։
Քաղաքական.—Քաղաքական տեսութիւն.—Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
Յայտարարութիւններ։
Բանաստեղծական.—Մուսային գանգատը (շարուն.)։

Թիֆլիս, 15 մարտի 1888

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ.

Ա.

Հայոց թատրոնի գոյութեան խնդիրը թատերասէրներին զբաղեցնում է։ Գաւառներից ստացած բազմաթիւ թղթակցութիւնների մէջ ցաւ է յայտնուած, որ շատ քաղաքներում բարեկենդանի տօներին ժողովուրդը հայոց ներկայացումից զրկուած է մնացել։ Ասել է, որ հայ ժողովուրդը սիրով կը յաճախէր հայոց թատրոն, եթէ ներկայացումներ տրուէին։ Բայց ո՛րտեղից. նոյն իսկ Թիֆլիսը չունի ոչ թատրոն և ոչ էլ դերասանական խումբ։

Այսօր հայոց բեմի գաղափարը պահպանողները թատերասէրներ են, որոնք այս և այն քաղաքում մի որևէ ներկայացումն են գլուխ բերում բարեգործական նպատակով, և Թիֆլիսի նախկին դրամատիկական խումբի մի քանի անդամները, որոնք գաւառական քաղաքներում ամեն տեսակ խոչընդոտների դէմ կռուելով՝ կարողանում են հայերէն ներկայացումներ տալ։

Թոյլներնք գաւառական բեմերի գոյութեան խնդիրը, որ ապագային է պատկանում, դառնանք Թիֆլիսին, որի վերայ իբրև մայրաքաղաքի վերայ նայում են ամեն կողմից։

Ինչպէս պէտք է անենք, որ Թիֆլիսի հայ ժողովրդի համար հայոց թատրոնի գոյութիւնը ապահովուի։

Թատրոնի վերաբերութեամբ մենք քանիցս առիթ ենք ունեցել խօսելու։ Այս անգամ մի քանի նկատողութիւններով կը շատանանք։ Թատերական բեմի գոյութիւնը անհրաժեշտ է արդէն նրա համար, որովհետև նա մի գործօն (ֆակտօր) է իւրաքանչիւր ժողովրդի առաջադիմութեան գործում։ Հետևաբար հայոց բեմի գոյութիւնը անհրաժեշտ է հայ ժողովրդի վերածնութեան գործի համար, եթէ, ի հարկէ, գոյութիւն ունեցող բեմը լաւ ուղղութիւն ունի և լրջութեամբ և գործը հասկացող, սիրող և գործին նուիրուած անձերի ձեռքով է կառավարվում։

Թիֆլիսում հայոց թատրոնի գոյութիւնը ապահովուած է, երբ հայ ժողովուրդը ունի իւր սեպհական թատրոնի շինութիւնը, երբ ունի լաւ կամ միջակ՝ բայց լաւ պատրաստուած դերասանական խումբ և երրորդ՝ բեմական յարմար և ընտիր գրուածքներ։

Ուրեմն հայոց թատրոնի գոյութեան համար պէտք են երեք բան, որ չունենք. ա) թատրոնի շինութիւն, բ) դերասաններ և դերասանուհիներ և գ) բեմական գրուածքներ։

Առաջին կէտի մասին գիտենք, որ ամենքը մեզ հետ կը համաձայնուին, որովհետև դա անձի չէ վերաբերում, այլ շինութեան. սեպհական բեմ չունի Թիֆլիսի հայ ժողովուրդը, որ քաղաքիս բնակիչների մեծամասնութիւնն է կազմում։ Այս մասին վիճելու բան չկայ. սա հաստատ է։ Երկրորդ կէտը, այսինքն այն՝ որ մենք դերասաններ և դերասանուհիներ չունենք, և երրորդ կէտը, այսինքն այն՝ որ բեմական րեպէրտուար չունենք, դրանց մասին կարելի է վիճել։

Դերասանների մասին մեր անելիք նկատողութիւնները ուրիշ պատեհ ժամանակի թողնելով, ցաւով պէտք է յայտնենք, որ եթէ այսօր մի լաւ դրամատիկական խումբ կարելի լինեը իբրև հրաշք ստեղծել, մենք չպիտի կարողանայինք գրանց պիէսաներ տալ ներկայացնելու համար, որովհետև նպատակայարմար րեպէրտուար չունենք։

Մեր մտաւոր ծուլութեան, մեր հոգեկան պահանջների և ճաշակի զարգացման ստոր աստիճանը որոշելու համար բաւական է ասել, որ այսօր էլ մեր ենթնդիեն հասարակութիւնը հայերէն ներկայացումն տալու համար ներկայացնել է տալիս այնպիսի պիէսներ, որոնք քսանևհինգ տարի առաջ, իրենց աշխարհք գուրս գալու օրից արդէն փթած, անպէտք կամ շատ աղքատ բաներ էին։

Եթէ մի գիւղում կամ գաւառական յետը նկած փոքրիկ քաղաքում գտնվում են երիտասարդներ, որոնք ներկայացնում են «Գալ Ղազօ», «Խեչօլի թուզը», «Օսկան Պետրովիչ գժոխքումը», «Վուլ քի իմ վէչեր». «Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունինք» և այլ այդ տեսակ բեմական գրուածքներ, այդ հասկանում ենք, քանի որ այնտեղի ժողովուրդը աւելի պահանջ չունի և թէ աւելի լաւ պիէսներ ձեռք բերելու կամ ընտրելու անկարող են։ Բայց ինչ ասենք, երբ տեսնում ենք, որ միևնոյնը կատարվում է և՛ Թիֆլիսում, և՛ Պետերբուրգում, և՛ Մոսկվայում և այլ աւելի զարգացած տեղերում։

Պետերբուրգում հայ հասարակութիւնը գնում է տեսնելու հայոց ներկայացումը։ Դա հազուագիւտ երևոյթ է Պետերբուրգում։ Ուսանողները ամբողջ շաբաթներ աշխատել, չարչարուել են, որպէսզի կարողանան մի հայերէն ներկայացումն գլուխ բերել։ Ինչ են ներկայացնում. «Խեչօլի թուզ» և «Օսկան Պետրովիչ» պիէսների արժանաւորութիւն ունեցող պիէսներ։ Թէպետև Սունդուկեանցի կոմէդիաների բովանդակութիւնը մեծ մասամբ Թիֆլիսի համար էլ անհրաժեշտ է, բայց կարելի է, որ Ամերիկայի հայ գաղթականութիւնն էլ ներկայացնէ, երբ կամենում լինի հայերէն ներկայացումն տալ։ Մինչև օրս էլ, երբ կամենում են մեր երկրի հայերը ողբերգութիւն ներկայացնել, որտեղ կուզէ լինի, ներկայացնում են Շուշանիկ, Վարդանանց պատերազմ, Արշակ Բ. և այլ այդ տեսակ—ասիական ողբերգութիւններ։ Իսկ երբ կամենում են կոմէդիա ներկայացնել, խաղում են վերը յիշած կտորները և Սունդուկեանցի կոմէդիաներից, որոնք ժողովրդի ճաշակը փչացնելով, բարոյապէս չեն զարգացնում, և շատ անգամ էլ թմրեցնում և լիմարացնում են։

ՔՐՈՆԻԿՈՆ

Չէլեմունցիների օգտին համգանգուածին տուացաւ 41 րուբլի Դալ-Մամեդլի կայարանից։ Այդ գումարը մեզ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՄՈՒՍԻՆԻ ԳԱՆԳԱՏԸ *)

(Գիւղական կեանքից)

IV

Առաւօտեան վաղ Մուսին Հանապարհ ընկաւ դէպի Ուզունթալա։ Ուզունթալան՝ Լալի գիւղի հետ մի շինական կառավարութիւն կազմելով՝ նրանից չորս վերստ հեռաւորութեան վերայ է գտնվում դէպի հարաւ-արևմուտք։ Նա Լալի գիւղից շատ բարձրաման է, այդ պատճառով էլ, յայտնի օրինաց հետևան վերայ, քեօխվէն միշտ այդ տեղից է ընտրվում։ Շարժուած Մուսինին օգնութիւն հասցնելու ցանկութիւնից՝ ես էլ Հանապարհ ընկայ դէպի Ուզունթալա։ Հանապարհին իմ ու Մուսինի խօսակցութեան նիւթը գլխաւորապէս Եփրեմն գողութիւնն էր։ Ուրախացած նրանով, որ Մուսինին աջողուեց վերջապէս իւր այգու գողը բռնել և նրանով, որ քեօխվէն անշուշտ պատժելու է յանցաւորին ինչպէս հարկն է, սկսեցի մանրամասն հարցմունքները անել Եփրեմին բռնելու մասին։ Նա ինձ եղածն խոհութեամբ պատմեց — երեկոյեան որ տուն եկայ, սկսեց պատմել Մուսին, մեր խեղճն ասաց, որ Եփրեմը կալի եղները բաղերի գլխի վերայ քշեց. նա հաւատացրեց ինձ, որ Եփրեմն առանց մեր բաղը մտնելու չէ գիմա-

*) Տես «Նոր-Դար» № 37

նալու, և թէ ինձ հարկաւոր է այդ գիշեր անքուն մնալ։ Թէպէտ ջարդուած էլ, բայց ինչ արած. վճռեցի այդ գիշեր ամենևին չքնել։ Սիրաս վկայեց, որ Եփրեմը Հանապարհի կողմից պիտի մեր բաղը մտնի, այդ պատճառով էլ գնացի և թեք ընկայ չափարից մօտ՝ Թեքենիների տակ։ Մի քիչ-միչ աչքս կպցրել էի թէ չէ, յանկարծ մի հրացանց լսեցի։ Կամաց գլուխս բարձրացրի՝ տեսայ մի մարդ, որի մինը չափարի վերայ դրած՝ ականջ է դնում։ Ինքն էլ մի շատ լուսնեակ գիշեր էր։ Հանդարտ շուարքը քաշուեցի, որ չտեսնուեմ։ Այդ ժամանակ մի խռտոցի ձայն դիպաւ ականջիս։

—Ա՛ ինչռէ ես կանգնել, Թոխ բաղն ընկի էլի, ասաց մինը Հանապարհից։

—Ո՞նց Թռչեմ, վայ թէ Մուսին բաղումը լինի... պատասխանեց վրայինը։ Վայ է, բանդ կտրուի։ Մուսին, ախ է իմանում, Չարդուած մարդ, հիմի ձը վագան տակին է չնթռած...

—Ա՛, Աստած վկայ, ոտներս լըք-լըքում են, կը տեսնես, գլուխս բան է գալու, պատասխանեց չափարի վրայինը։

—Այդ ինչ վախլուկ ես, գէսը կաց, ես եմ մտնում... պատասխանեց Հանապարհում կանգնածը։ Այս խօսքերը կարծես ամաչացրին չափարի վրայինին, և նա Թռաւ, ընկաւ բաղը։ Ես ինձ զգուշութեամբ հաւաքեցի, որ ամենևին չնկատուեմ։ Բանից երևաց, որ նրանք երկու էին. բայց չիմացայ թէ այն միւս ընկերն ով էր։

—Մ՛իթէ երաք անուն չէին տալի, հարցրի ես։

—Գողութեան ժամանակ երաք անուն չեն տալ, պատասխանեց Մուսին, եթէ տան էլ՝ կեղծ անուններ կը տան, աւելացրեց նա։

—Ցետոյ ինչ։ Որ Թռաւ բաղն ընկաւ, մի քիչ կանգնեց և ականջ դրեց. երբոր տեսաւ ձայն-ձուն չկայ, կամաց առաջ գնաց դէպի վագները։ Նայեցի տեսայ այդ գնացողի ձեռքին մի չուխայ կայ։ Ջուխի չեռը կապած էր, խաղողը քաղում էր չուխէն ածում։ Հենց մի քանի Հիթ (ողկոյզ) չուխէն էր գցել Թէ չէ, տեղիցս վեր կացայ։ Ջանարի մօտ՝ Հանապարհում կանգնածն իմ դրացին տեսաւ. այդ ժամանակ նա շվվացրեց. երևի այդ նշանն էր, որովհետև շվվոցի վերայ բաղի ընկերը վազեց խոհոյն դէպի չափարը, որ եկած տեղով դուրս փախչի։ Բայց ո՛րտեղ. առաջը կարեցի և ձեռիս եղանը որ վերայ բերի նրա ականջատակը, տեսայ առաջիս փռուեց. այնուհետև ձեռիս էր։

—Իսկ այն միւս ընկերը, հարցրի ես։—Նա փախաւ, պատասխանեց Մուսին ծիծաղելով։

Այսպէս զրոյց անելով մենք չուտով հասանք Ուզունթալա։ Հասնելով քեօխվի տունն՝ տեսանք նա ձին Թամբում է, որ ուրիշ տեղ գնայ։ Իմ ներկայութեամբ Մուսին մանրամասն պատմեց եղածը։ Քեօխվէն սաստիկ զայրացաւ Եփրեմի վերայ։

—Շատ լաւ, ասաց նա, դու գնա՛ ձեր տունը՝ այդ չուխէն էլ հետդ տար և մօտդ պահիր. ես էգուց մի դէման անեմ, որ աշխարհս Թամաշայ գայ։ Քոռ Բաթիրի Թոռը հիմի էլ սկսել է քեասիբ-քիսիբի բաղերը քանդել, գայլացած խօսում էր քեօխվէն։ Լաւ, ա Մուս, չարունակեց նա, դու գնա, ես էգուց անպատճառ կը գամ ձեր գիւղը. այդ ժամանակ կը տեսնես, Թէ ինչ կը բերեմ Բաթիրի Թոռան գլուխը... Շատ ուրախացայ ես քեօխվի այդպիսի պատասխանի վերայ։ Ես ու Մուսին խոհոյն վերադարձանք։

V

Այդ ժամանակուայ քեօխվէն Ա. գատանց Սահակն էր։ Դա յայտնի էր գիւղում իւր արհեստի անունով. նրան դալլաք Սահակ էին ասում։ Դալլաք Սահակը մի տկլոր մարդ էր. նա քեօխվայ գառնալով, ինչպէս երևում էր, միտք ունէր միայն երեն դպտել։ Դալլաք Սահակը յայտնի էր իւր վերին աստիճանի կաշառակերութեամբ։ Նա, սոված շան պէս, մշտ ոսկի էր ման գալիս, որ կրծի։ Երբ որ այդ պարոնից հարցնում էին՝ Թէ ինչու այդչափ կաշառակերութիւն է անում, նա միշտ լակոնական պատասխան էր տալիս. «Բա ամ իմ մօր ծիծը չեմ ծծելու» Մուսին համ հաւանում էր քեօխվի ասածներին, համ էլ սաստիկ կասկածում։

—Այդ շան տղի բռնելը, դու կտեսնես, Բաթիրի տղերքը բան են գցելու, և բանն ուրիշ տեսակ է չուռ գալու, Աբշակ, ասում էր նա ինձ վշտացին ձայնով։

—Մ՛ի վախի, Մուսի ապէ, այդպէս չէ կարող լինել, Հանգստացնում էի նրան. քեօխվէն կաշառ վերցնելու դուռը չունի։

—Է՜ հ, Աբշակ ջան, դու մեր գիւղի բաները չես իմանալ. մեզանում օրէնք չկայ. մենք որ կանք՝ գոլե տակն խալխ ենք. մեզանում ով ոյժ ունի՝ բանը նրանն է. ինչ ես կորցրել՝ ինչի ես ման գալի։ Մեր քեօխվէն ինձանից վատթար մի տկլոր՝ լծուղ մարդ է՝ ոչ խղճմտանք ունի, ոչ ամօթ. մի շահու համար իւր որդուն կը մորթի՝ ինչ ես ասում դու, խօսում էր Մուսին, Հակատի քրտինքը սրբելով։

—Այ մարդ, ինչ ես երեխայ-երեխայ խօսում, քեզ ասում եմ, որ քեօխվէն չէ կարող կաշառք վերցնել. միթէ ես վկայ չեմ նրա ասած խօսքերին, Հանգստացնում էի Մուսին, բայց ի գոր, նա չէր հաւատում։

Թուրքին մի առակ ունի, պատասխանեց Մուսին. ասում է՝ «աչք, ինչից ես վախում—Թէ՝ տեսածից»։ Հիմի իմը չլինի, շարունակեց նա։ Ես իմ աչքի տեսածին եմ վախում, բալամ։ Մի տարի էլի այդ Բաթիրանց ապրանքն իմ Աղի Եալի արտն էր ընկել, բերի տուն արի, և ամենքն էլ տեսան, որ գնացի Բաթիրանց ապրանքը մեր արտից դուրս արի, բերի։ Այդ ժամանակուայ քեօխվէն էլի Ջամուրի տղան էր (դալլաք Սահակը Ջամուրի տղայ անուամբ էլ է յայտնի)։ Գնացի

Ա՛հ, տեսնեմ ձեզ նորից, ես ձեր ծառան, ես ձեր հնազանդ ստրուկը, որ ձեր ոտքերը համբուրելու արժանի չէ, ես ձեր շունը, որ ձեզ պաշտում է, ես ձեր ոտքի փոշին, որ ձեզ ոտնակոխ է անում, ես ձեր հետքերը, որ ձեզ հետևում է, ես ձեր ստվերը, որ ձեզ ծածկում է, ես ձեր ամենաանարգ ծառան, որ ձեզ ամենից շատ է սիրում

ցէ գործի՛մեծութիւնն ը՛ չկոթել խըմբագրութեան մեքը։ Ճշմարիտ է, եթէ ամեն ամիս այնքան տպագրուէը գործեց, որքան «Արարատի Ա. ամսատետրն է, հազիւ թէ երկու տարուայ մէջ կաւարտուէը։ Բայց ինչ հոգ. Թող երկու չէ, չորս հինգ տարուան աւարտուէը։ Ամեն ամսագիը մի ընտիը գործի Թարգմանութիւն ուներ, որպէս յաւելուած։ Խնդիրն այն է, որ գերազանցիւ Թարգմանչի ձիրքը փոխանակ վատնելու մանը մուռը բանների վերայ, կարելի էը գործ դնել մի մեծ աշխատութեան վերայ, որ ըստ ամենայնի յարմար էը նրա կարողութեան։ Անշուշտ այս կէտում մի Թերամտութիւն կայ. մենք կամենում ենք մտածել, թէ յանձնաժողովը այդ գործի ամրողջութեան անձանօթ էը, ապա թէ ոչ, ոչինչ բան կարող չէ արգելք լինել նրա տպագրութեան։ Մենք կամենում ենք մտածել, թէ էջմիածնի միաբանութեան մէջ անհետացած չէ հին ատանդութիւնը։ Մենք գիտենք, որ այնտեղ միաբանութիւնը օգուտ է քաղել իւր լեզուագէտ անդամների քանքարից և խընդրել է Թարգմանել այս ու այն օտար հեղինակի գործը, որ եկեղեցական մատենագրութեան գանձ է համարուել։ Այս բանին ապացոյց ենք գտնում Լվովցի վարդապետի խօսքերի մէջ, որի ասելով Յովսէփոսի «պատմութիւնը» Թարգմանել է իւր միաբանակիցների խնդրանօք։ Մի՛թէ էջմիածնի արդի միաբանութիւնը այս նկատմամբ չետ է մնացել իւր նախորդների խոնարհամիտ ուսումնասիրութիւնից։ Գուցէ յոյսը դրել է Հեմարանի խոստացած պատուղների վերայ.—բայց կարծեմ ասուած է թէ՝ «որ յուսով մեղանչէ, անյոյս կորնչի»։ Ներկայ դէպքում ընկերի քանքարից չօգտուելը, մեր կարծիքով, յուսով մեղանչել է...։

Վերանորոգեալ «Արարատի» երկրորդ բաժինը նուիրուած է ս. էջմիածնի գրադարանին, որի դռները վ.Եկ. Հայրապետի հրամանով բացուել են «Արարատի» խմբագրութեան առաջ։ Փառք Աստուծոյ։ Խմբագրութիւնը սկսել է նրա Հեռագիրների չիշատակարանները քննել և պատմական-ժամանակագրական նշանակութիւն ունեցող մասերը հրատարակել այս բաժնի մէջ՝ կամ ամրողջութեամբ, կամ բովանդակութեամբ։ Խմբագրութիւնը այս աշխատանքի մէջ մի կարգ պահելու համար՝ Հեռագիրները բաժանել է դարերի, և սկսել է հրատարակել մեր դարին կից, այսինքն անցեալ 1780—1880 դարում գրուած Հեռագիրների չիշատակարանները։ Մեր կարծիքով դա վատ միտք չէ։ Այսօր մեր գրասէրները բաւական ծանօթութիւն ստացել են XVII և XVIII դարի ազգային-պատմական անցքերի մասին՝ շնորհիւ պ. Բաֆֆիի «Խամսայի մելիքութեան» և յարգելի Գ. Շերմազանեանցի «Մարտղու վանքը» աշխատութիւնների, ուրեմն ընթերցողը կատարեալ հեշտութիւն կարող է տածել «Արարատի» դէպի այս բաժինը։

Այս բաժնի մէջ է «Ներսիսեան ծաղկազը» յօդուածը, որի վերայ կարող եմ ասել, թէ կեդրոնացած է վերանորոգեալ «Արարատի» առաջին ամսատետրի բոլոր հետաքրքրութիւնը։ Մեր բանասէրին նորհուրդ տալով, որ անպատճառ ինքը կարդայ այս յօդուածը՝ պարտաւոր ենք համարում նրա բովանդակութիւնը կարճ պատմել։ Բանասէրին յայտնի է, որ Գաւիթ-Դանիէլեան կռիւների ժամանակ՝ Ւ-րարից հեռու գտնուող համախոհները, մխիթարից հետ անվտանգ հաղորդակցութիւն պահելու համար՝ մի տեսակ գիր էին հնարել, որ միայն Ւ-բենց էը յայտնի, և նրանով Թղթակցում էին միմեանց մէջ։ Դա ծածկագիր էր, որի հեղինակութիւնը ստանդութեամբ աշտարակցի Ներսէսին էին վերագրում։ Այդպիսի ծածկագրերով գրուած Թղթեր մնացել են մինչև այժմ շատերի մօտ. բայց ոչ ոք չէը լսանում կարդալ։ Այժմ էջմիածնի յարգելի միաբանութիւնից մի անդամ, որ ի զուր համեստութեամբ իւր անունը «միաբան» բառի տակ քօղարկել է, շատ սրամիտ արամաբանութեամբ քակում է այդ դիւթական կծիկը և դրել է մեր առաջ այդ գըրութիւնների ընթերցման բանալին։ Եթէ համեմատական ընթերցանութեան արդիւնքը հաստատէ յարգելի «միաբանի» մակաբերութեան ստուգութիւնը, այն ժամանակ խոստովանելու ենք, որ նա մի առանձին ծառայութիւն է արած մեր պատմական մատենագրութեան, որովհետև այդ ծածկագրերի մէջ բովանդակուած նիւթերը վերաբերվում են մեր պատմութեան այն անցքին, որի ուսումնասիրելը՝ թէև կարի կարևոր է, բայց մինչև այժմ ամենաթանձր խաւարով է ծածկուած։ Մեզ համար անչափ մխիթարութիւն էը լսելով յարգելի «միաբանից», որ Դաւիթ-Դանիէլեան կռիւները բուն Թեան և փառամոլութեան լոկ պայքար չէին, այլ երկու հզօր գաղափարների ընդհարումն։ Այս անցքի վերայ մենք էլ այսպէս էինք նայել «Պօլօժէնի»-ի չիսուն ամեակի առիթով մեր գրած պատմական տեսութեան մէջ։ Այդ տեսակ մի բան կատարվում է այժմ և Բօլղարիայում։

Կատարելապէս ցանկանում ենք աջողութիւն յարգելի «միաբանի» ուսումնական աշխատութեան։ Գոնէ այդ փոքրիկ մարդից օրինակ առնէին Ճեմարանի «մեծ մարդիկ»...

Այս բաժնի երրորդ յօդուածն է պ. Ս. Մանդինեանցի «Մելտոն և նրա կորուստ դրախտը» յօդուածը՝ ըստ Տէնի։ Յօդուածը չարունակուելու է։ կարծեմ ժամանակ է մեր մանկավարժապետներին՝ երեսը խելացի և գրաւիչ յօդուածներով սէր արծարծել հասարակութեան մէջ դէպի կլասիկական երկասիրութիւնները, որոնք գրատուների մէջ փթում են։ Պ. Ս. Մանդինեանցի յօդուածը անչուշտ չափերի մէջ կարծարծէ այդ սէրը և, եթէ չէ կարողացել Միլտոնի «Դրախտ կորուսեալը», անշուշտ կուզէ կարդալ։ Պ. Ս. Մանդինեանցը Հ. Ա. Բագրատունու Թարգմանութիւնն է ընտրել. Ճշմարիտ է, որ քսէ գրաբառագէտի համար «Կորուսեալ դրախտն» է ընտրելի։ Սակայն մենք կարծում ենք, որ սակաւագէտների համար առաւել հրապուրիչ է և մաշելի Հ. Աւգերեանի «Դրախտ կորուսեալի» լեզուն և ոՃը, մանաւանդ որ արձակ Թարգմանութիւն է։

Բժ. Աբամ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Վիլհելմ կայսրի մահը.—Անգլիական և Ֆրանսիական Թերթերի կարծիքները.—Ֆրանսիան և գեներալ Բուլանժէի գործը.—«Cocarde» նոր Թերթը։

—

Գերմանական գահի վերայ գերմանական նոր կայսրն, Ֆրիդրիխ III-ի բազմելուց յետոյ առաջին հարցը, որ ամենքը և ամեն տեղ (ով ի հարկէ հետաքրքրվում է քաղաքականութեամբ) տուին իրենց, այդ այն է, Թէ ինչ ուղղութիւն կ'ստանայ գերմանական քաղաքականութիւնն այսուհետև։ Այդ մասին շատ հետաքրքիր է գանագան լրագիրների յայտնած կարծիքները և արած նկատողութիւնները։ Անգլիական Թերթերից «Daily Telegraph»-ը կարծում է, որ Վիլհելմ կայսրի մահը ոչինչ չփոթութիւն չի առաջացնիլ Եւրոպայի գրութեան մէջ. Հանգուցեալ կայսրի խաղաղասիրական նկրտումները նրա մահից յետոյ էլ կապրին, մանաւանդ որ պետութեան բաղդը ոչ երբէք մի անձից կախուած պէտք է համարել։ «Morning Post»-ը համարեա Թէ նոյն խօսքերն է ասում։ «Standard»-ը կարծում է, որ իշ. Բիսմարկը կը վայելէ Ֆրիդրիխ կայսրի կողմից ևս նոյն հաւատը, ինչ որ վայելում էր Վիլհելմ կայսրի կողմից։ Նոյնն է կարծում և «Times»-ը. բայց նրա վեննայի Թղթակիցը կարծում է, որ Աւստրիայի յարաբերութեան մէջ դէպի Գերմանիան մեծ փոփոխութիւն է առաջանալու, որովհետև Ֆրիդրիխ կայսրը այնքան էլ չէ համակրում Աւստրիային։ Այդ Թղթակցի ասելով, կայսրի համակրութիւնը ամրողջապէս գտնվում է խաւլիայի կողմը, որի Թագաւորի հետ սերտ բարեկամ է 1868 Թուից. այնուհետև նա համակրում է Անգլիային, որովհետև իւր կինն Անգլիայի Թագուհու աղջիկն է, այնուհետև համակրում է Ֆրանսիային և չետոյ միայն Աւստրիային։ Ա.հասարակ անգլիական Թերթերի մեծ մասը կանգ են առնում կայսրի և Բիսմարկի մէջ հաստատուելու յարաբերութիւնների կէտում և յոյս են յայտնում, որ Գերմանիայի արտաքին և ներքին քաղաքականութեան մէջ ոչ մի էական փոփոխութիւն չի մտնիլ։ Ֆրանսիական Թերթերից «Gaulois»-ն ասում է, որ Ֆրանսիայում ամենախօրին յարգանքով և ցաւակցութեամբ դիտում են այժմ Գերմանիայում կատարուող երկու մեռնողների ողբերգութեան վերայ. այդպիսի դժբաղդութեան առաջ Ֆրանսիան մոռանում է իրեն հասցրած չարութիւնը. Ֆրանսիայի այսպիսի վարմունքը պէտք է խաղաղութեան հաստատուելուն ոյժ տար։ «Figaro»-ն կարծում է, որ Վիլհելմ կայսրի մահով հիմք չկայ կարծելու, որ եւրոպական միջազգային քաղաքականութեան մէջ խիստ փոփոխութիւններ կարող են առաջանալ։

«Radical»-ը կարծում է, որ Գերմանիայում տեղի ունեցող փոփոխութիւնն լինքն ըստ լինքեան ոչինչ սպառնական ձև չունի Ֆրանսիայի վերաբերութեամբ։ Justice»-ը կարծում է, որ Վիլհելմ կայսրի մահը պատճառ չի դառնալ եւրոպական բանակների Ճակատելուն. Ներկայ կայսրի միջոցին խաղաղութիւնը աւելի հաստատուն կը լինի, քան նրա որդու, պրինց Վիլհելմի կառավարութեան միջոցին։ «Intransigeant»-ը կարծում է, որ պէտք է գեն. Բուլանժէին Ֆրանսիայի կառավարութեան գլուխ անցկացնել, որպէս Ֆրանսիայի ապահովութեան ամենալաւ միջոց Գերմանիայի դէմ, երբ կառավարիչը պրինց Վիլհելմը կը լինի։ «Temps»-ը ասում է, Թէ Ֆրանսիայի զգացումներն լինչ ուղղութիւն էլ ունենան դէպի այն անձը, որ Ֆրանսիայի առաջին պարտութեան պատճառն է, բայց և այնպէս Վիլհելմի մահը պատմական մեծ երևոյթ է։ «Liberté»-ն մեծ յարգանքով խօսում է նրա մասին, որպէս մի մարդու՝ որին ճակատագիրն այնպիսի նախասատութիւն է տուել, որպիսին ոչ մինին չէ տուել։ «Journ. des Débats»-ն կարծում է, Թէ լինչ էլ որ լինի, իշ. Բիսմարկը քանի կենդանի է, կարող չէ գերմանական քաղաքականութեան մէջ խիստ փոփոխութիւն մտնել։ Իշ. Բիսմարկի մահը կը լինի անհամեմատ մեծ քաղաքական երևոյթ Գերմանիայի և Եւրոպայի համար։ Մենք կամաւ այսքան երկար կանգ առանք Ֆրանսիական Թերթերի յայտնած կարծիքների վերայ, որովհետև դա նշանակութիւն ունի երկու ազգերի փոխադարձ յարաբերութիւնների համար։

—Այժմ ամբողջ Ֆրանսիայի ուշադրութիւնը կենդրոնացած է գեներալ Բուլանժէի վերայ. Հասարակապետութեան նախագահը, մինիստրութիւնը, պատգամաւորների ժողովը, հասարակութեան մամուլը, մի խօսքով, բոլորը-բոլորը զբաղուած են այդ գեներալի անձով։ Երբ գեներալ Բուլանժէին զինուորական մինիստր էր, երբ ընդհանուր ոգևորութիւն էր տիրում նրա անձի համար, այն միջոցներին էր, որ «Նոր-Դար»-ը իւր Թէ առաջնորդողների, Թէ քաղաքական տեսութիւնների և Թէ լուրերի մէջ մատնացոյց անելով այդ գեներալի վերայ, միևնոյն ժամանակ ցոյց էր տալիս այն վտանգը, որ կարող էր առաջանալ։ Միևնոյն բանը դեռ մոտերքս վերջին քաղաքական տեսութեան մէջ նկատել էինք ասելով, Թէ գեն. Բուլանժէին հասարակապետութեան նախագահ (դեռ նա ձրգտում է) ընտրուելուց յետոյ դիկտատորութեան պիտի դիմէ։ Վերջին պատահմունքների մէջ ևս պատգամաւորների ժողովին կազմել մի յանձնաժողով Շօվլանդեանի համար օրինագիծ կազմելու։ Գլխաւոնը համաձայն է Շօվլանդեանի համար և պահանջելու նոյն պատասխանութիւնները, ինչ որ պահանջում է Իւլանդիայի համար։ Մինիստրութիւնը, այդ առաջարկութեան մէջ տեսնելով Շօվլանդեան Մեծ-Բրիտանիայից բաժանելու քայլը, մերժեց նրան։

Թիւրքիա.—կ. Պօլսի անգլիական դեսպան սէր Չ.Էյմս-Ռւայտը յայտարարել է Բ. Դրան, որ Անգլիան պատրաստ է բոլորովին Թողնելու Եգիպտոսը, եթէ անգլիական նաւերին արձակ մուտք կտրուի Դարդանէլի նեղուցով։ Այս առաջարկը յանձնուած է Թիւրքական մինիստրների խորհրդի քննութեան, ինչպէս յայտնի է, ոչ մի պատութիւն մինչև այժմ պատրաստ չունի Դարդանէլի նեղուցը. եթէ Անգլիան այդ իրաւունքն էլ ձեռք բերի, այն ժամանակ արդէն կարելի է համարձակ ասել, որ նա տէր կը դառնայ բոլոր նշանաւոր նեղուցներին և նրանց միջով էլ չըջակայ երկրների վերայ առաջնակարգ ազդեցութիւն կունենայ։

—ԱՄԵՐԻԿԱ.—Նախագահական ընտրութիւնը կենդրոնացած է գեներալ Բուլանժէի վերայ. Հասարակապետութեան նախագահը, մինիստրութիւնը, պատգամաւորների ժողովը, հասարակութեան մամուլը, մի խօսքով, բոլորը-բոլորը զբաղուած են այդ գեներալի անձով։ Երբ գեներալ Բուլանժէին զինուորական մինիստր էր, երբ ընդհանուր ոգևորութիւն էր տիրում նրա անձի համար, այն միջոցներին էր, որ «Նոր-Դար»-ը իւր Թէ առաջնորդողների, Թէ քաղաքական տեսութիւնների և Թէ լուրերի մէջ մատնացոյց անելով այդ գեներալի վերայ, միևնոյն ժամանակ ցոյց էր տալիս այն վտանգը, որ կարող էր առաջանալ։ Միևնոյն բանը դեռ մոտերքս վերջին քաղաքական տեսութեան մէջ նկատել էինք ասելով, Թէ գեն. Բուլանժէին հասարակապետութեան նախագահ (դեռ նա ձրգտում է) ընտրուելուց յետոյ դիկտատորութեան պիտի դիմէ։ Վերջին պատահմունքների մէջ ևս պատգամաւորների ժողովին կազմել մի յանձնաժողով Շօվլանդեանի համար օրինագիծ կազմելու։ Գլխաւոնը համաձայն է Շօվլանդեանի համար և պահանջելու նոյն պատասխանութիւնները, ինչ որ պահանջում է Իւլանդիայի համար։ Մինիստրութիւնը, այդ առաջարկութեան մէջ տեսնելով Շօվլանդեան Մեծ-Բրիտանիայից բաժանելու քայլը, մերժեց նրան։

Թիւրքիա.—կ. Պօլսի անգլիական դեսպան սէր Չ.Էյմս-Ռւայտը յայտարարել է Բ. Դրան, որ Անգլիան պատրաստ է բոլորովին Թողնելու Եգիպտոսը, եթէ անգլիական նաւերին արձակ մուտք կտրուի Դարդանէլի նեղուցով։ Այս առաջարկը յանձնուած է Թիւրքական մինիստրների խորհրդի քննութեան, ինչպէս յայտնի է, ոչ մի պատութիւն մինչև այժմ պատրաստ չունի Դարդանէլի նեղուցը. եթէ Անգլիան այդ իրաւունքն էլ ձեռք բերի, այն ժամանակ արդէն կարելի է համարձակ ասել, որ նա տէր կը դառնայ բոլոր նշանաւոր նեղուցներին և նրանց միջով էլ չըջակայ երկրների վերայ առաջնակարգ ազդեցութիւն կունենայ։

ԽԱՓԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիլհելմ կայսրի կեանքից. Աւգուստա կայսրուհին.—Հանգուցեալ Վիլհելմ կայսրի յարաբերութեան մասին դէպի Աւգուստա կայսրուհին պատմում են այսպիսի մի անեկդոտ։ Կայսրը շատ անգամ ծիծաղում էր ինքն իւր վերայ և ասում էր իւր մերձաւորներին. «ինձ հիւսես են անուանում և այդպէս էլ նկարագրում են ինձ ամեն տեղ, բայց ոչ ոք չգիտէ, որ ես, Գերմանիայի ամենամեծ հերոսս գտնվում եմ կնոջս ոտնամանների տակ (այսինքն կնոջ ազդեցութեան տակ)»։

* *
*

Վիլհելմ կայսրի չափրուկը.—«Ինչի՞ այդքան չափրուկ էք սիրում», հարցրին մի անգամ կայսրին։ Մանկական կեանքից հետևեալ դէպքը պատճառ էր եղել այդ բանին՝ կայսրի իրեն ասելով։ «Երբ մայրս ինձ և հանգուցեալ եղբօրս հետ կեօնիգսբերգից փախչում էր Մեմէլ, պատմում էր Վիլհելմ կայսրը, Հանապարհին էր Վիլհելմ կայսրը, Հանապարհին հին, դաշտում չանկարծ կոտրուեց մեր կառքի անիւը։ Մենք ստիպուած էինք մինչև անիւը նորոգելը սպասելու։ Եւ, որպէս Թոյլ և հիւանդոտ երեխայ, Հանձրացրել էի մօրս իմ գանգատներով։ Մայրս մեզ զբաղեցնելու համար, ցոյց տուեց դաշտի երեսին սիրուած բազմաթիւ գեղեցիկ կապոյտ ծաղիկները և խնդրեց, որ գնանք և հաւաքենք։ Այնուհետև նա սկսեց պսակներ հիւսել նրանցից, իսկ մենք մեծ բաւականութեամբ զիւտում էինք աշխատանքը։ Այս աշխատանքի մէջ-ղին մայրս, նկարել մոռացնելով իւր Հնչուած հայրենիքի վիճակը, արտասուեց և արտասուքը կաթում էր յափրուկի վերայ։ Այդ բանը խիստ յուզեց ինձ։ Ես սկսայ նրան մխիթարել իմ համբոյրներով, և այդ միջոցին նա պսակը գրեց իմ գլխին։ Այն ժամանակ ես 10 տարեկան էի, և այդ անջնջելի մնաց իմ սրտում։ Այժմ, ծերութեանս հասակում, երբ մտիկ եմ անում յափրուկներին, նրա վերայ տեսնում եմ ես իմ թանկագին մօր արտասուքը, ուստի և սիրում եմ այդ ծաղիկը»։

***

Վիլհելմ կայսրի վերջին ցանկութիւնը.— Հանգուցեալ կայսրը շատ ցանկանում էր, մի վերջին անգամ էլ տեսնել իւր որդուն։ Երբ պրօֆէսսոր Բէրգման ուղևորում էր Սան-Րէմօ, նա խնդրում էր բժշկին, որ երեն էլ առնէ հետը. «Առէք ինձ էլ քեզ հետ, ես խօ գինուոր եմ և նեղութիւն չեմ տալ քեզ»։

***

Վիլհելմ կայսրը, Մօլտկէն և Բիսմարկը չարդի մէջ.— Եօթանասուն Թուականի Ֆրանկ-պրուսական պատերազմի մէջոցին էր։ Մարս-լա-Տուրի մօտ տեղի ունեցող պատերազմից յետոյ, բոլոր շրջակայ գիւղերն ու աւանները լցուած էին մեռնողներով և վիրաւորներով, այնպէս որ Թագաւորի համար հագիւ հազ գտան մի սենեակ, ուր ընդամենը կար մի մահճակալ, մի սեղան և մի աթոռ։ Թագաւորը մտաւ ներս և հարցրեց. «Բայց ո՞ւր են Մօլտկէն և Բիսմարկը»։

—Նրանց համար դեռ բնակարան չկայ, պատասխանեց ադիւտանտը, լաւ գիտնալով, Թէ որքան կարևոր էր այդ երկուսի համար էլ Հանգստութիւնը, որպէս զի կարող լինէին երեսց աշխատանքը շարունակել։

—Ուրեմն հրաւիրեցէք նրանց էլ ինձ հետ գիշերելու, ասաց Թագաւորը, իսկ մահճակալը կարող էք վերցնել, դա հիւանդների համար աւելի հարկաւոր է։ Աւելի լաւ է կազադրեցէք, որ յարդ և վերմակ բերեն,—այդ էլ բաւական է մեզ համար։

Հրամանն իսկոյն կատարուեց, և երեքը—Թագաւորը, կանցլերը և մարջալտը անձրևային գիշերը քնեցին յարդի մէջ։ Սակայն, Ֆրանկ-պրուսական ծանր պատերազմի մէջոցին չատ անգամ այդպիսի դէպքեր եղան։

***

Վիլհելմը որպէս դաշնակահար.—1843 Թուին, պալատական օրսի մէջոցին Գօթա քաղաքի շրջակայքում, Վիլհելմ կայսրը, այն ժամանակ ընչացէս պրինց, այցելեց Պռուլինցի դաշնակի գործատունը։ Գործարանատէրը սկզբով ցոյց տուեց այցելուներին իւր գործարանը և վերջապէս նստելով դաշնակի առաջ, և անծանօթ հիւրին պատուելու համար ածեց կլասիկական մի պիէս։ Պրինցն ուշադրութեամբ լսում էր վարպետի ածելը և երբ վերջինս հարցրեց, Թէ արդեօք յարգելի հիւրն էլ գիտէ ածել, պրինցը պատասխանեց. «Էւ, մի փոքր ղնգնգացնում եմ». Նա նստեց դաշնակի առաջ և մի փոքր ժամանակ դէս ու դէնից ածելուց յետոյ, վերջացրեց ածելով փառահեղ «Heil dir. im Siegeskranz» մելոդին։ «Հեանալի է, փառահեղ է, ասաց վարպետը. դուք նշանաւոր դաշնակահար կը դառնաք, և ես մինչ ուենի ձեզ լաւ տեղ տալու»։—«Ես, պատասխանեց պրինցը, այնպիսի պաշտօն եմ վարում, որը չեմ կարող և չեմ համաձայնուիլ Թողնելու, ուստի առաջարկեցէք աւելի արժանաւորին»։—«Ո՛չմ հետ պատիւ ունիմ խօսելու»։—«Ես—պրուսական պրինց Վիլհելմն եմ»։—Ո՛հ Ջերզ արքայական Բարձրութիւն, որքան ցաւալի է այդ, ափսոս, ինչ տաղանդաւոր աշակերտ է կորցնում այստեղ արուեստը»։—Սիրելի վարպետ, քաղցրութեամբ նկատեց պրինցը, իւր ձեռքը մեկնելով նրան, «կարծում եմ, որ Աստուած իւր խնամատութեամբ տնօրինում է ինչպէս տաղանդները, նոյնպէս և դերութիւնները ու կոչումները. գուցէ ես էլ իմ դերութեանս մէջ մի բանի կը հասնեմ»։

***

Կայսրը սպասում է.—Մի անգամ Վիլհելմ կայսրը առանց հետևորդների, միայն սպասաւորի ուղեկցութեամբ գնաց Վիկտորիա Թատրոնը։ Սպասաւորը, կայսրի ներս մտնելուց յետոյ, Թողեց կառքն ու մտաւ մօտի խմիչքավաճառի մօտ։ Կառավարդ ժամից յետոյ, ներկայացումը վերչեկաւ կայսրին՝ Թէ մի ուրիշ պատճառ կայ, չգիտեմ, բայց կայսրը դուրս եկաւ Թատրոնից։ Կառապանը նստած է իւր տեղում, բայց սպասաւորը չկայ։ Մինչև Թատրոնի սպասաւորներից մինը վազել, կայսրի սպասաւորին գտնելը, կայսրը սոխպուած էր սպասելու։ Թեղճ սպասաւորը, վախից չեղապատառ եղած սկսաւ Թողութիւն խընդրել. «Ինչի՞ ես այդքան յուզվում, նրկատեց կայսրը, դու խօ շատ անգամ ես ինձ սպասել, մի անգամ էլ ես քեզ սպասեցի։ Այժմ մենք կվիտ հնք. բնց կառքի դուռը»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 Մարտ.— Որովհետև մի քանի, յորենի ընդարձակ առևտուր անողներ խոյս են տալիս Ա. կարգի գիլդի առնելուց, ֆինանսների մինիստրը հացահատիկների առևտրականների առևտրական տուրք վճարելու վերաբերմամբ պետական պալատներին ուղղած շրջաբերականով յանձնարարեց առաջնորդուել 1886 թ. մայիսի 6-ի շրջաբերականի ճշդութեամբ. բայց միևնոյն ժամանակ ցոյց է տալիս, որ թէև այդ շրջաբերականի 7-րդ յօդուածը կարող է յորենի մեծ առևտուրը բ. գիլդի վկայականներով անելուն որոշ չափով արդարացուցիչ պատճառ լինել, բայց և այնպէս, պէտք է առաջնորդուել առևտրական կանոնադրութեան 1 և 32-րդ յօդուածների ուղիղ իմաստներով, մանաւանդ այն դէպքերում, երբ պարզուած է, որ որոշեալ առևտուրը, իւր ընդհանուր նշաններով պէտք է որ անշուշտ մեծ քանակով (օպտօվ) վաճառահանելու տեսակին պատկանի։

ՊԱՐԻԶ.— Մարսէլում եղած ընտրութիւնների միջոցին Բուլանժէն ստացաւ ընդամենը 983 ձայն, այլ ընարուած է սոցիալիստ Ֆէլիկս-Պիան, որի համար տրուած է 40,000 ձայն։ Դրա փոխարէն Լիոնում Բուլանժէն ստացաւ 45,000 ձայն. բայց կան և կրինաքուէսարկութիւններ՝ միւս կանդիդատներն էլ ձայների նշանաւոր բազմութիւն ստանալու պատճառով։

ԲԵՐԼԻՆ.— Ռուսական Թագաժառանգի այստեղ գտնուելու առիթով շատ պաշտօնեաների շնորհուած է շքանշաններ, ի Թիւս որոնց Հերբերտ Բիսմարկին, ս. Ալէքսանդր Նեվացու աստիճանը։

ՊԱՐԻԶ.—Վճռաբեկ ատեանը Վիլսօնին և նրա մեղսակիցներին արդարացրեց մխիթարելով այն պատճառով, որ օրէնքը չէ նախատեսել աստիճանների վաճառահանութեան յանցանքը։

ՎԵՆՆԱ.—Այստեղ խօսում են, որ բօլղարական մինիստրները պրօվինցիոն Կլիմէնտինից փող են պահանջում, այլապէս պրինց Ֆերդինանդը կարող չէ Բօլղարիայում մնալ։

ԽԱՐԿՕՎ.—Գատական պալատը երեք օր, Պալտավայի ազնուականական խնամակալութեան փողերի վատնման գործը քննելուց յետոյ, դատապարտեց՝ խնամակալութեան անդամներից Կապիտանենկոին և Կլիմէնկոին, որոնք մեղաւոր են ճանաչուած անգործութեան համար, հրաժարեցնել պաշտօնից, իսկ քարտուղար Պրիսնէնկոին, որ առաջ էլ զինուորակոչի մէջ իրաւունքը ի չարը գործ դնելու համար Սիբիր աքսորուելու է դատապարտուած եղել, Սիբիրի ոչ այնքան հեռու կողմերը աքսորի։ Ազնուականութեան առաջնորդ Գարնիցկին արդարացրած է։ Կորուստի պահանջը որոշուած է կատարել՝ մեղապարտների կալքերից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 Մարտ.— Երկու Պետերբուրգ եկաւ գերմանական գեներալ Վերդերը՝ Ֆրիդրիխ կայսրի գահակալութիւնը պաշտօնապէս յայտնելու համար։

ԲՐԻՒՍՍԵԼ.— Այստեղ սպասում են պրինց Կօբուրգի իշխանութեան ապօրինութեան մասին մեծ եպարքոսի յայտարարութեան, բօլղարական կառավարիչներն ոչ մի պատասխան չեն ուղարկիլ։

ԲՈՒԿՈՒՐԵՍՏ.—Ընդդիմադիր կուսակցութեան կոմմնակիցների առած ցոյցերի պատճառով, նրանց և ժանդարմների մէջ կռիւ պատահեց, որի միջոցին մի քանի հոգի վիրաւորուած են։ Թագաւորի պալատը շրջապատած է պահապաններով. քաղաքում լուզումն կայ։

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդէն լոյս տեսաւ

ՏՄՐԼԱՉԻ ԽԱՉԱՆԻ
ՓԷՏԻԼԵԱՕՆՆԵՐը

Առանձին գրքոյկով՝ փոփոխած և աւելացրած, ԽԱՉԱՆԻ լուսանկար պատկերով։ Վաճառվում է՝—ԲԱԴՈՒԻ պ. Տիգրան Ղոնդաղսապեանի մօտ, ՇՈՒՇԻ — Հոգևոր Տեսչութեան տպարանում, ԹԻՖԼԻՍ պ. Եփ. Ծատուրեանի լամպաների մագազինում Ս. Ազամալեանցի մօտ և ԴԱՐԲԱՆԴ—պ. Կ. Մելիք Շահնազարեանի մօտ։

Գինն է պատկերով 45 կոպ.։
առանց պատկերի 35 կոպ.։
(Ա.) X—5

Վաճառվում են
Ա Ն Վ Տ Ա Ն Գ
ՇՎԵԴԱԿԱՆ
ԼՈՒՑԿԻՆԵՐ
(ШВЕДСКІЯ СПИЧКИ)

Կատարելագործուած, սպիտակ բոցով, ամենաէժան գներով։ Մեծ քանակութեամբ առնողներին մեծ զիջումն է լինում։

ԳՕՐՇԱՐԱՆ Գ. Բ. ՏԵՐ ԱՍՏՈՒՐՈՎ ԵԻ ԸՆԿ.

ԹԻՖԼԻՍ. Վերայում.
50—34

ԾՕԿՕԼԱԳ
Ս. ՍԻՈՒ ԵԻ ԸՆԿ.
(Մ.) 50 - 18

ՌՅԻՒՀԿ ՄԻՍՔԻ ԸՐԱՏԻՆՑ
ՍԱԼԻՆԻՑ ԷՋՄԻԱՆՑԻՆ
Նկարագիր
ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ
Քաղաքին- փոխոխութիւններով
Գինն է 50 կոպեկ
Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ա.) Ռ—5

ՉԻՑԹՈՒՆՑԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ
Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ւ Մ Է
„ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ“
Դաշնամուրի համար

1) Vivace
2) Հայոց եղանակ.
3) Բաշիբուզուկի եղանակ.
4) Ցարձակումն.
5) Հայոց եղանակ.
6) Թիֆլիսի զուռնա.
7) Քրդի եղանակ.
8) Նախիջևանի ջրիլերների եղանակ.
9) Իջաս պարսկական.
10) Պարսկական եղանակ.
11) Մօլդավական պար.

Գինն է 1 րուբլի. Ձանապարհածախսի համար պէտք է վճարել 11 կոպէկ մարկայով։
Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան, Թիֆլիսում։

ВОСТОЧНЫЕ МОТИВЫ
для фортепіано

1) Vivace
2) Армянскій мотивъ.
3) Башибузукскій мотивъ
4) Нападеніе.
5) Армянскій мотивъ.
6) Тифлисская зурна.
7) Курдинскій мотивъ.
8) Мотивъ Нахичеванск. водовозовъ.
9) Иджасъ, Персидскій мотивъ.
10) Персидскій мотивъ.
11) Молдавскій танецъ.

MOTIFS ORIENTEAUX
Pour le Piano

Цѣна 1 руб. и 11 к. (марками),
Можно получать въ ред. «Норъ-Даръ», въ Тифлисѣ.
(խմ.) X—7

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Շոգենաւային երկաթուղին Բաթում, Օպեռայի և կ. Պօլսի միջև։

—

Բաթումից գնում է

Հինգշաբթիները.—Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռօսիյսկի և Կերչի վերայով։

Շաբաթ օրերը.—Երեկոյեան 8 ժամերին, շոգենաւային ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Երկուշաբթիները.—Երեկոյեան պատասահմանեան գնացքով կ. Պօլիս։

Բաթումից գալիս է

Հինգշաբթիները.—Կէս գիշերուայ մօտերքը, Օդեսայից, շոգենաւային ընթացքով։

Ուրբաթները. — Առաւօտը, Օդեսայից, ուղիղ գծով կիրչի և Նովոռօսիյսկի վերայով։

Շաբաթ օրերը.—Առաւօտը կ. Պօլսից։

Փոթիից գնում է Բաթում

Երկուշաբթիները.—Սուխումից շոգենաւային նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Հինգշաբթիները. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին միանալու։

Շաբաթ օրերը. — Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Բումէլիա-Անատոլեան շոգենաւային միանալու։

Բաթումից գնում է Փոթի

Ուրբաթ և կիրակի օրերը.—Նաւի դուրս գնալու ժամը որոշվում է Բաթումի նաւային գործակալութիւնից՝ նաւը փոթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ փոթի գալիս են Օդեսայից և Ղրիմ-Կովկասեան գծի նաւահանգիստներից որոշեալ ժամանակի ապրանքները և մարդկիը խառն նաւեր՝ կիրակի օրերը երեկոյեան և գնում են Բաթում՝ երեքշաբթի օրերը, երբ գործառնութիւնները վերջացնելուց յետոյ, իսկ Բաթումից՝ ուրբաթ օրերը երեկոյեան, որ մտնում է Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստները, եթէ կարիք լինի, մտնում է և փոթի։

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го Марта 1888 г. Տպարան Լ. Գ. Կրամարենկոյի Типографія Л. Г. Крамаренко, Гол. пр., д. Читахова.